



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ԼայրիԼ

2016
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԵՊՀ

**ԺԶ. ԴԱՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ
ՄԻՏՈՒՄԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԺԶ. դարասկզբին Սեֆյան Պարսկաստանի նվաճողական քաղա-
կական պատերազմների ընթացքում ռազմադաշտի վերածված Հայաս-
տանը եւ հարեւան հայաբնակ շրջանները սոսկալի կորուստներ են կրել
ռազմական գործողություններից եւ դրանց հետեւանքներից: Ինչպես
հաշվարկել է Խ. Թոլոլյանը, մի քանի հարյուր հազար հայ խաղաղ բնա-
կիչներ են մահացել, զգալի թվով փախստականներ էլ տեղափոխվել են
Օսմանյան կայսրության արեւմտյան շրջաններ (Պոլսոս, Քյոթահիա,
Զմյուռնիա, Կոստանդնուպոլիս) եւ Եվրոպա¹: Ժողովրդագրական գոր-
ծընթացները Հայաստանում ԺԶ. դարում աչքի են ընկնում մի շարք
առանձնահատկություններով՝ հայ բնակչության զանգվածային տեղա-
հանումներ, հաճախակի կրկնվող սով եւ ժանտախտ, օտար էթնիկական
տարրի (մասնավորապես՝ քրդերի) ներթափանցում, մանկահավաքչու-
թյուն, կրոնական հալածանքներ եւ այլն, որոնց անդրադառնալուց առաջ
հարկավոր է պարզել դրանք պայմանավորող գործոնները:

Հայաստանի բնակչության թիվը մոնղոլական արշավանքների նախօր-
յակին, ըստ Թ. Հակոբյանի հաշվարկների², շուրջ 5 մլն է եղել, որից մոտ
4,5 մլն՝ գյուղական, 0,5 մլն՝ քաղաքային: Մոնղոլական տիրապետության
շրջանից Հայաստան մուտք գործած քոչվորական տնտեսվարման ձեւը
զգալի հարված է հասցրել տեղաբնիկ նստակյաց հասարակության ավան-
դական հողատիրության համակարգին եւ երկրագործական մշակույթին՝
արտագաղթի հսկայական ալիքի պատճառ դառնալով: ԺԴ. դարի վերջին

¹ Տե՛ս **Kh. Tololyan**, Armenian Diaspora, in Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures Around the World, Editors: M. Ember, C. Ember, I. Skoggard, Springer Science+Business Media Inc., 2005, էջ 39.

² Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 2007, էջ 361:

Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր ենթարկվել են Լենկ Թեմուրի արշավանքներին, որոնք տասնյակ հազարավոր մարդկանց կյանք են խլել: Չնայած տեղի ունեցող ոչ նպաստավոր էթնոգործընթացներին՝ Հայերը շարունակել են կազմել բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Անգամ թուրք հեղինակ Ջ. Տոգանը «Ներածություն թուրքերի պատմության» աշխատության մեջ գրում է. «Մեծ Հայք կոչված Արեւելյան Անատոլիայում հայերը XIII-XIV դարերում կազմում էին բնակչության մեծամասնությունը»³: Ժե. դարում՝ թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում, կարակոյունլուների եւ ակկոյունլուների միջեւ մրցակցության պայմաններում տեղի են ունեցել հայ բնակչության բռնագաղթեր, հայության տարբեր զանգվածներ բռնել են արտագաղթի ուղին:

Հայկական պետականության եւ պաշտոնական-պետական վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր է հստակորեն հաշվարկել Հայաստանի բնակչության թիվը ԺՁ. դարում կամ դրան նախորդող ժամանակահատվածում: Սկզբնաղբյուրների տեղեկություններից ելնելով՝ Մ. Ջուլայանն իրավացիորեն գտնում է, որ հիշյալ ժամանակահատվածում Հայաստանի բնակչության մեծամասնությունը շարունակում էին մնալ գյուղացիները⁴: Նման պարագայում անհրաժեշտ է դիտարկել այն հնարավորությունները, որոնցով ավանդական (մինչարդյունաբերական) վերարտադրության պայմաններում, ինչը բնորոշ էր ուշմիջնադարյան Հայաստանին, կարող էր պայմանավորվել բնակչության թվի աճի դինամիկան: Նախեւառաջ պետք է նշել, որ բնական ռեսուրսների քանակի եւ տեղաբաշխման, հողային պաշարների եւ դրանց տնտեսական կարգավիճակի կայունությունը հանգեցնում են նրան, որ ավանդական վերարտադրության պայմաններում բնակչության թվի աճ է գրանցվում: Հակառակն է լինում այն ժամանակ, երբ արտադրության (արհեստագործական կամ գյուղատնտեսական) կտրուկ աճ է գրանցվում, ավելանում է աշխատանքի պահանջարկը, հետեւաբար՝ աշխատատեղերը, եւ գրանցվում է եկամտոնների աճ: Բնակչության թվի կտրուկ նվազման պատճառ կարող էր լինել համաճարակը, օրինակ՝ ժանտախտը: Եվրոպայի ժողովրդագրական զարգացման ուշմիջնադարյան եւ նոր դարերի վաղ շրջանը դիտարկելիս աչքի են զարնում բնակչության տեղաբաշխման միտումների հետեւյալ տարբերությունները. Հոլանդիայի հողային ռեսուրսների կայունության

³ Z. Toğan, Umumi Türk tarihine giriş, Ankara, 1946, s. 197 (հղումը տես Մ. Ջուլայան, Հայոց պատմության խնդրաշարումը արդի թուրք պատմագրության մեջ (հին եւ միջին դարեր), Երևան, 1995, էջ 104):

⁴ Տես Մ. Зулалян, Армения в первой половине XVI в., Москва, 1971, էջ 34.

պատճառով բնակչության թիվը չնչին աճ է գրանցել, իսկ Արեւելյան Եվրոպայում՝ Վիսլայից մինչեւ Ուրալյան լեռներ, քառապատկվել է, քանի որ յուրացվել են գյուղատնտեսական նոր տարածքներ⁵:

Հայաստանի տարածքում երկրագործական նոր հողահանդակների յուրացման հնարավորությունները սահմանափակ էին, քանի որ հողագործական աշխատանքների համար պիտանի հողերի (դաշտերի) գերակշիռ մեծամասնությունը հարյուրամյակներ եւ նույնիսկ հազարամյակներ շարունակ յուրացված էին, ուստի բնակչության կտրուկ աճ դժվար էր պատկերացնել: Նման պայմաններում գյուղատնտեսական աշխատանքների հաճախակի խաթարումն ու գյուղատնտեսական արտադրանքի կրճատումը, ինչպես նաեւ առեւտրի՝ առնվազն տեղային սահմանափակումները, որոնք անխուսափելի էին պատերազմների պատճառով, կարող էին հանգեցնել բնակչության թվի նվազման: Այս համատեքստում տեղին է Իռլանդիայի օրինակը, որի բնակչության թվի կրկնակի նվազման պատճառը արդյունաբերացման նախաչեմին՝ ԺԹ. դարում գյուղատնտեսության թուլյ համակարգի վրա բնակչության մեծ թվի գերբեռնումն էր:

Այսպիսով, ռեսուրսների ծավալի անփոփոխ լինելը եւ որոշակի շրջաբաժանումը հանգեցնում են գյուղական բնակչության թվի կայունության, իսկ նոր ռեսուրսների ստեղծումը (նոր հողերի յուրացում, արդյունաբերության զարգացում, առեւտրի ընդլայնում) նպաստում է բնակչության թվի արագ աճին: Համաճարակներն ու սպառողական մեծ բեռը շրջակա միջավայրի վրա առաջացնում են ժողովրդագրական ճգնաժամեր: Ընդ որում՝ միջավայրի, կյանքի պայմանների եւ սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունները կարող են ապահովել բնակչության թվի երկարատեւ աճ կամ ընդհակառակը⁶: Հատկանշական է, որ, ըստ Ի. Պետրուշեւսկու՝ ԺԶ. դարում Արեւելյան Հայաստանում դեռեւս պահպանվել էր երկրագործ գյուղական համայնքների կայունությունը⁷: Էլ ավելի կարեւոր է ընտանիքի ավանդական մոդելի պահպանումը: Սակայն երկարաժամկետ գործընթացներն ապահովող գործոնների կողքին առկա են նաեւ ժողովրդագրական փոփոխությունները սահմանափակող գործոնների համակարգեր՝ տարածքը եւ ազատ հողերի առկայությունը, սննդամթերքի արտադրությունը եւ սննդի ռեժիմը, համաճարակային իրավիճակը⁸, որոնք ավելի արագ կարող են փոփոխվել: Բնական պայմաններում այս

⁵ Стів М. Бачи, Демографическая история Европы (II тысячелетие), СПб., 2010, էջ 8-9.

⁶ Стів անդ, էջ 9:

⁷ Стів И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв., Ленинград, 1949, էջ 73.

⁸ Стів М. Бачи, նշվ. աշխ., էջ 10, 12.

գործոնները դանդաղ են փոխվում, սակայն ռազմաքաղաքական իրավիճակը եւ ժողովրդագրական քաղաքականությունը կարող են կտրուկ փոփոխություններ բերել տվյալ տարածքի բնակչության, երբեմն՝ կոնկրետ էթնիկական հանրության ժողովրդագրական համակարգի բաղադրիչների՝ ամուսնություն, ծնելիության, մահացության, մոբիլության եւ միգրացիայի վրա: Այստեղ ավելորդ չի լինի նշել, որ Արեւմտյան Հայաստանում հայերի շրջանում ծնելիության գործակիցը շարունակել է բարձր լինել անգամ Օսմանյան կայսրության տիրապետության պայմաններում, քանի որ երկարատեւ աճ ապահովող գործոններից մեկի՝ սոցիալական կառուցվածքի տեսանկյունից անփոփոխ է մնացել նահապետական ընտանիքը: Սակայն գյուղատնտեսության զարգացման ցածր տեմպերը եւ հետեւաբար ռեսուրսների ծավալի ցածր աճը ծնելիության բարձր տեմպերի պահպանման պայմաններում հանգեցրել են արդեն ԺԹ. դարում բնակչության թվի աճի դանդաղեցման՝ միայն արտագաղթի հաշվին: Փաստորեն, ժողովրդագրական համակարգի բաղադրիչներից լուրջ փոփոխության է ենթարկվել միայն միգրացիան, որը պայմանավորել է նաեւ մոբիլության տեղային փոփոխություններ, իսկ մյուս բաղադրիչներից ամուսնությունը եւ ծնելիությունը լուրջ փոփոխություններ չեն կրել ռեսուրսների հարաբերական կայունության եւ ավանդական ընտանիքի շնորհիվ:

Ծնելիության մակարդակի մասին պատկերացում կազմելու համար փորձել ենք հայերեն ձեռագրերի հիշատակարաններից դուրս բերել ընտանիքի անդամների թիվը: Հաշվարկի համար դիտարկել ենք ԺԶ. դարում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններ Սողբից, Սանահինից, Համչենից, Թոխաթից, Գավառից (Խաչքար), Կեղիից եւ այլ բնակավայրերից: Դրանցում ներկայացված են ընտանիքի՝ համապատասխանաբար 7^0 , 10^0 , 7^1 , 9^2 , 6^{43} , 6^{44} եւ 8^5 անդամ: Միջին գործակիցը ստացվում է 7.6^{46} : Ժողովրդագրական իմաստով հետաքրքիր է հեղինակների կամ

⁹ Տես Յուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, ԲՄ, թ. 4, 1958, էջ 384-385:

¹⁰ Տես անդ, էջ 387:

¹¹ Տես «Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում», կազմեց՝ Զ. Արզումանյան, ԲՄ, թ. 11, 1973, էջ 385-387:

¹² Տես Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 349-353:

¹³ Տես ԴՀՎ, սյր. IV, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, 1982, էջ 108:

¹⁴ Տես «Մանր ժամանակագրություններ» (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 246:

¹⁵ Տես անդ, էջ 159:

¹⁶ Համոզված ենք, որ ընտանիքի միջին մեծության գործակիցը հնարավոր կլիներ ավելի հստակ հաշվարկել, եթե հրատարակված լինեին ԺԶ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները:

գրիչների կողմից անձնապես իրենց առնչվող տեղեկությունների շարադրումը: Այսպես, Անդրեաս ժամանակագիրը հաղորդում է, որ իր եղբայրներից մեկը մահացել է 14 տարեկանում, իսկ ինքը ծնվել է 1541 թ.¹⁷, ամուսնացել 20 տարեկանում եւ 22-ում որդի ունեցել , ով մահացել է 1579 թ.¹⁸: 16 տարեկանում, իսկ մինչ այդ՝ 1569 թ., մահացել է 4 տարին դեռ չբողոքած դուստրը, եւ ծնվել է եւս մեկ որդի¹⁸, որը մահացել է 1585 թ.¹⁹: Նա 2 որդիներ է ունեցել նաեւ 39 եւ 43 տարեկանում, եւս մեկ դուստր՝ 46 տարեկանում²⁰: Այսպիսով, գրիչը 6 զավակ է ունեցել, որոնցից 3-ը բավականին վաղ են մահացել, բայց նա շարունակել է զավակներ ունենալ անգամ բավականին պատկառելի տարիքում: Սա նշանակում է, որ ծնելիություն մակարդակը շարունակում էր զգալիորեն բարձր լինել, սակայն բարձր էր նաեւ մահացությունից, որն առանձնակիորեն արտահայտվում էր մանուկ եւ պատանի տարիքային խմբերում:

Այսպիսով, ԺԶ. դարի սկզբին Հայաստանում ռազմաքաղաքական իրադրությունը պայմաններում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա ազդող գործոններն էին մի կողմից կյանքի վատթարացող պայմանները եւ միաժամանակ ամուր ներէթնիկ սոցիալական կառուցվածքը, մյուս կողմից՝ տարածքի յուրացվածությունից բարձր աստիճանը (ազատ հողերի սակավությունը), սննդամթերքի արտադրության խաթարումները (պատերազմական իրավիճակի պատճառով երկրագործական աշխատանքներն ընդմիջվում էին, իսկ անասունների թալանը սովորական բնույթ էր կրում) եւ հաճախ կրկնվող համաճարակները (հատկապես՝ ժանտախտը):

Թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ընթացքում սովորական բնույթ էին կրում տարբեր բնակավայրերի ավերածությունները եւ թալանը, որոնք, փաստորեն, խաթարում էին սննդի արտադրության ցիկլի բնականոն ընթացքը: Օսմանյան կայսրության ամրապնդման գրավականներից էր նորանվաճ հողերում տեղաբնիկների զանգվածային բռնագաղթը (այուրգյուն) եւ թյուրքական տարրի բնակեցումը, որի առաջին օրինակներն ի հայտ են եկել դեռեւս Օրհան Ա.-ի (1326-1362) ժամանակներում²¹: Սեֆյանների կողմից Հայաստանի նվաճման, այնուհետեւ հատկապես Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ Հայաստանից

¹⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 157:

¹⁸ Տե՛ս անդ, էջ 158:

¹⁹ Տե՛ս անդ, էջ 159:

²⁰ Տե՛ս անդ:

²¹ Տե՛ս Ա. Ծաքարյան, Բոնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ, ՄԱ, հ. 2, 2005, էջ 59-62:

Հարյուր Հազարավոր Հայեր գերեվարման են ենթարկվել, որոնց մի մասը վերաբնակեցվել է, մյուս մասը՝ ստրկության վաճառվել²²: Նմանօրինակ քաղաքականության հետեւանքները տեսնելու համար ստորեւ ներայացնում ենք պատերազմական գործողությունների ժամանակ այն իրադարձությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվել են ժողովրդագրական գործընթացների համատեքստում:

Հակոբ Կարնեցու «Ժամանակագրության» (ԺԷ. դար) համաձայն՝ 1501 թ. Սեֆյան շահ Իսմայիլ Ա.-ն (1501-1524) «...առաքեաց զօրս բազումս երկիրս Հայոց՝ գերեաց. աւերեաց եւ ասպատակեաց բազում գիւղք եւ գաւառք»՝ հասնելով մինչեւ Խաղտյաց (Բաբերդի) գավառ²³: Դեպքերին ժամանակակից կամախեցի Վրթանես գրիչը նույն իրադարձությունների առնչությամբ 1501 թ. գրում է, որ Սեֆյանների ասպատակությունների պատճառով իր գավառակիցների հետ ստիպված է եղել հեռանալ Հայրենի հողից²⁴: Մեկ այլ սկզբնաղբյուրի համաձայն՝ 1501 թ. Սեֆյանների ներխուժման արդյունքում Երզնկայից մեծ թվով Հայեր փախել են դեպի արեւմուտք²⁵: 1504 թ. Սանահնում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում խոսվում է Սեֆյանների նորահաստատ տիրապետության խիստ Հարկապահանջության պատճառով վանքի հոգեւոր սպասավոր Խաչատուր քահանայի սպանության եւ տեղի Հայության՝ դեպի հյուսիս՝ «ընդ իշխանութիւն Վրաց» փախուստի մասին²⁶: Փաստորեն, Սեֆյանների նվաճողական գործողություններն արտագաղթի պատճառ են դարձել: Գուգարքում քանիցս հանդիպում են պատերազմում զոհվածների մասին վիմագիր տեղեկություններ, ինչպես օրինակ, Սանահնի գավթի 1506 թ. տապանաքարի արձանագրությունը, որտեղ նշվում է հոր եւ երկու որդիների մահը «ի պատերազմի»²⁷:

Հետաքրքիր կերպով էին դասավորվում իրադարձությունները Վանա լճի ավազանում, որտեղ Սեֆյան բանակը բախվեց քրդական ցեղախմբերի հետ: 1501 թ. Քաջբերունիքում (Արճեշում) նկարագրվող դեպքերի մասին ժամանակակից Բարսեղ Արճիշեցին նշում է, որ քաղաքի բնակչությունը քրիստոնյաներ են, որոնք օտար նվաճողների ծանր հարկապահանջության

²² Տէն Ա. Խառատյան, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երեւան, 2007, էջ 331:

²³ Տէն «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 239:

²⁴ Տէն Մ. Зулалаян, Армения в первой половине XVI в., էջ 62.

²⁵ Տէն «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 130:

²⁶ Տէն «Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում», էջ 387-389:

²⁷ Տէն ԴԷՎ, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, 2012, էջ 48:

պատճառով ընտանիքներով 3 ամսով հեռացել են Վան, Ոստան, Արծկե եւ Բաղեշ²⁸: 1501 թ. Բաղեշի քրդերը գրավել են Արծկեն եւ այրել ու ավերել նորաշեն տները²⁹: Այս գործողությունների պատճառով 1502 թ. Հայ բնակչությունը մի քանի ամսով փախուստի է դիմել Արճեշից: Բախումներն ուղեկցվել են նաեւ Հայ բնակչության պարենամթերքի թալանով, օրինակ՝ 1503 թ. Սեւանի բերդի (Արճակ լճից հարավ-արեւելք) քրդերը Արճեշը թալանել եւ 1210 բեռ Հայ են տարել³⁰: Սեֆյանները շուտով անցել են պատասխան գործողությունների, եկել Արճեշի գավառ, Հայերից բռնի կերպով ծանր հարկեր հավաքել, «յելանելն բազում կին եւ հարսն գերի վերուցին»՝ գերեվարելով 400 պատանի եւ 1000 տավար³¹: Նման գործողություններն սկսում են սովորական բնույթ կրել: 1504 թ. Տարոնի դաշտում գտնվող քրդական եւ թուրքական 500 ձիավորներ ներխուժել են Քաջբերունիք եւ տարել Արճեշի ու գյուղերի բոլոր անասունները³²:

Սեֆյանները կարճ ժամանակով կարողացան նվաճել ամբողջ Հայաստանը, սակայն 1514 թ. Չալդրանի ճակատամարտում Սեֆյաններին պարտություն մատնելուց հետո օսմանյան սուլթան Սելիմ Ա. Ահեղը (1512-1520) 1515 թ. գրավել է Կամախը³³, 1516 թ.՝ Ամիդը, եւ Հայաստանի զգալի մասն անցել է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: 1510-ական թթ. երկրորդ կեսին եւ 1520-ական թթ. Հայաստանի տարածքում հարաբերական անդորր է տիրել, խոչորամասշտաբ ռազմական բախումներ չեն հիշատակվում, սակայն իրավիճակը փոխվում է 1530-ական թթ.: 1530 թ. ձեռագրի մի հիշատակարանում ասվում է, որ Արծկեից մինչեւ Թավրիզ մեծ վրդովման պատճառով «մեք լուեալ փախըստական եղաք եւ յաշխարհէ յաշխարհ շրջեցաք»³⁴: Դեպքերին ժամանակակից Հովհաննես Արճիշեցու (ԺԶ. դար) տարեգրության համաձայն՝ 1531-1532 թթ. պարսից շահի դեմ ապստամբած եւ Օսմանյան կայսրության կողմն անցած Թավրիզի բեկլարբեկ Ուլամայի գործողությունների արդյունքում Բաղեշի քուրդ ամիրա Շարաֆը դիմում է պարսից շահին եւ ապաստա-

²⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 127:

²⁹ Տե՛ս անդ, էջ 130:

³⁰ Տե՛ս անդ, էջ 127:

³¹ Տե՛ս անդ, էջ 127-128:

³² Տե՛ս անդ, էջ 128:

³³ Տե՛ս «Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», Վաղարշապատ, 1896, գլ. ԾԱ., էջ 567, 582:

³⁴ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ» (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 232:

նուժ նրա մոտ, իսկ շահը շարժվում է Բաղեշ, Մուշ եւ Խլաթ³⁵ 1533 թ. գերեվարելով Խլաթի բնակչության մի մասը³⁶: Ուլամայի զորքերը Ամյուկ գավառի Ալյուր գյուղում «գերի արարին շատ հայ ու տաճկով ի ձեռն անկալ»³⁷: Հեղինակը հետո ներկայացնում է, որ լուրեր տարածվեցին, թե Ուլաման պետք է արշավեր Բերկրիի եւ Արճեշի բնակչությանը գերելու, եւ ինքն ու տեղի մնացյալ ժողովուրդը կարճ ժամանակով տեղափոխվել եւ ամրացել են Հերիձորում (Զարիշատ) եւ Ալադաղում (Ծաղկանց լեռներ), «եւ Աստուած խնայեաց զքրիստոնեայքն»³⁸:

1531-1535 թթ. պարսից բանակը ռազմակալեց Վանի նահանգը, ավերեց ու կրակի մատնեց Վանը, Ոստանը, Արձկեն: Ժամանակակից Հեղինակներն այս իրադարձություններն անվանել են «Վանի աղետ»³⁹: Հովհաննես Արճիշեցին գրում է, որ շահական բանակը 1533 թ. Վանը Ուլամայից գրավելիս 300 մարդու սրի է քաշել, այդ թվում՝ մի աբեղայի, այնուհետեւ «հեծեալքն ցուրեալ ի չորս դիմաց աւերեցին եւ անմարդաբնակ արարին զՎանայ երկիրն, զՈստանայ եւ զԱմկուն, եւ զինչ մարդ որ ի ձեռքն անկանէր այնչափ տանջէին... եւ սաստկացաւ պատուհասն, որ եւ զհրաշալի վանօրայքն եւ զեկեղեցիքն քակեցին...»⁴⁰: Հեղինակն այնուհետեւ ներկայացնում է, որ շահ Թահմասպ Ա.-ն (1524-1576) Ամիրա բեկին հանձնարարել է Վանի բերդից իջած մարդկանց Մահմտանք (Խոշաք) տանել, իսկ հաջորդ օրը իջածներին սրի են քաշել⁴¹: Գաղթի ճանապարհին՝ Վարազա լեռան ստորոտին, սաստիկ ձնաբուք է սկսվել, եւ 600 մարդ զոհ է գնացել ցրտին: Տեղ հասածները եւս մահացել են, օրինակ՝ Մահմտանքի մեկ գյուղում 80 վանեցի է մահացել: Ռազմական գործողությունների, սովի եւ ծարավի պատճառով Վան քաղաքում եւ նրա շրջակայքում 15 հազար մարդ է մահացել⁴²: Հեղինակը նույնիսկ թվարկում է զոհվածների անուններ, այդ թվում՝ իր հորաքրոջը, որ հարեւան 20 ընտանիքների հետ բերդն է բարձրացել, եւ նրանցից որեւէ մեկը ողջ չի մնացել⁴³: Վանում ընդօրինակված ձեռագրի մի հիշատակարանում եւս ասվում է, որ 1534 թ. «սպանին բազում քրիստոնեայս եւ զոմանս գերի վարեցին»:

³⁵ Տե՛ս անդ, էջ 227:

³⁶ Տե՛ս անդ, էջ 228:

³⁷ Անդ:

³⁸ Անդ:

³⁹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. II, գ. II, Երեւան, 2014, էջ 626:

⁴⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 229:

⁴¹ Տե՛ս անդ, էջ 229-230:

⁴² Տե՛ս անդ, էջ 230:

⁴³ Տե՛ս անդ, էջ 231:

գոհվեց 15 հազար մարդ⁴⁴: Նույն թվականի մեկ այլ հիշատակարանում 4 ամսվա կտրվածքով բերված է գոհերի՝ 16 հազար թիվը⁴⁵: Ըստ Վ. Բայբուրդյանի՝ Թահմասպ Ա.-ն Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության միջեւ «մեռյալ տարածություն» ստեղծելու նպատակով բռնի տեղահանության էր ենթարկում սահմանամերձ շրջանների հայ բնակչությանը՝ վերաբնակեցնելով նրանց իր պետության ներքին շրջաններում⁴⁶:

Հովհաննես Արճիշեցու վկայությունները ցույց են տալիս, որ Վանի բնակչության մի մասը հետագայում եւս պարբերական տեղաշարժեր է կատարել, մասնավորապես, երբ օսմանյան բանակը վերստին մտել է բերդու նորից որոշել թողնել այն, բնակիչների մի մասը գնացել է Մոկս, «եւ եկեալ շահն ի Վան, եւ տեսաւ զբերդն անմարդաբնակ եւ զքաղաքն աւերեալ...»⁴⁷: Ավելի առաջ շարժվելով՝ տեղեկանում է, որ օսմանյան բանակը նորից է ընդառաջ գալիս, «զԱրճիշու բերդի թուանգչիքն հաներ ու զժողովուրդն սուրգուն արեր մինչեւ յԱրծկէ»։ Հետաքրքիր է, որ մատենագիրը նշում է, թե Վանի Իբրահիմ փաշան, քաղաք վերադառնալով, «դարձեալ քրիստոնէութիւն արար էր օրհնեալ փաշէն ու զամէն ազատ արար, որ եկին յաշխարհն իւրեանց»։ Շահն այդ ժամանակ թալանել է Արծկեից չյուսիս ընկած Սարուսուն (Սարսուտ) գավառը, Խլաթը, Մուշը, Ոստանը⁴⁸:

1536-1543 թթ. թուրք-պարսկական ճակատում հարաբերական անդորր է տիրել, եւ Արեւմտյան Հայաստանում Օսմանյան կայսրությունն անցել է իր վարչամեքենայի ամրապնդմանը։ 1540 թ. Օսմանյան կայսրությունը էրզրումի նահանգում աշխարհագիր է անցկացրել, կազմվել են դավթարներ, կանուն-նամեններ, եւ վերջնականապես անցում է կատարվել օսմանյան կառավարման համակարգին եւ հողատիրությանը⁴⁹:

Սկզբնաղբյուրներում բազմիցս հիշատակվում է 1548 թ. շահ Թահմասպ Ա.-ի կողմից Արեւմտյան Հայաստանի ուղղությամբ ավերիչ արշավանքի մասին։ Այսպես, 1548 թ. շահը, ի պատասխան օսմանյան բանակի՝ Թավրիզ արշավանքին, ավերածության ենթարկեց Խնուսը (2 անգամ), Բասենը, Էրզրումը, Կեղին, Դերջանը, Բաբերդը, Երզնկան, Սպերը, Բիթ-

⁴⁴ Տե՛ս անդ, էջ 233:

⁴⁵ Տե՛ս անդ:

⁴⁶ Տե՛ս Վ. Բայբուրդյան, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 17-18:

⁴⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 231:

⁴⁸ Տե՛ս անդ:

⁴⁹ Տե՛ս Մ. Сванидзе, Первый поход Сулеймана I против Ирана 1533-1535 гг. и создание Эрзурумского пашалыка, «Թուրքագիտական եւ օսմանագիտական հետազոտություններ», հ. 5, Երևան, 2008, էջ 35-36:

լիսը⁵⁰: Թուրք պատմագիր Սուլաք Զադեն 1549-1550 թթ. պատերազմական գործողությունները նկարագրելիս նշում է, որ ամեն անգամ, երբ օսմանյան զորքերը նահանջում էին, Թահմասպ Ա.-ն «հարձակվում էր սահմանամերձ շրջանի բնակիչների ու ռայանների վրա եւ մոտակա բերդերի էմիրներից վրեժխնդիր լինում», ինչպես արեցին իլաթում եւ Արճեշում⁵¹: Իլաթ գյուղաքաղաքը 1549 թ. Թահմասպ Ա.-ի ավերումից հետո նախկին մեծության չի հասել⁵²: Ներսես Վարագեցի գրիչը ներկայացնում է 1548-1549 թթ. պատերազմական գործողությունների ժամանակ օսմանյան բանակի կողմից Վանի գյուղերի ու քաղաքների հրդեհումն ու հայ բնակչությանը բերդի շինարարություն եւ զորքի պարենավորման կարիքներին ծառայեցնելը⁵³: Այդուհանդերձ, 1550 թ. Թահմասպ Ա.-ն գրավել է Վանը, Արարատյան կուսակալությունը, էրզրումի նահանգը, հասել Երզնկա ու շատ հայերի գերեվարել⁵⁴: Դեպքերին ժամանակակից գրիչը հիշատակարանում վկայում է, որ 1552 թ. շահ Թահմասպը «պաշարեաց զծովն բոլոր՝ զՎասպուրականն եւ զՌըշտունիքն, զԲաղէշ եւ զՏարօնն, զԻլաթ եւ զԲզնունիքն, զՔաջբերունին եւ զՏարբերունին, զԽընուս, մինչ ի Յարզըռում, զԱղբակ եւ զՄահմուտանք...: Զբնակութիւն տեղոյն այնոցիկ քանդեցին, ակերեցին եւ հրմնայատակ արարին...: ...Եւ գնացեալ ոմն ի Հոռմաց տունն եւ ոմն ի Քուրդուստունն, ոմն ի Թուրքատան եւ ոմն ի Գուրջըստուն: Եւ մնաց երկիրն այն հոպանացեալ եւ անբնակ ի մարդկանէ րարի մի բոլոր (ընդգծումը մերն է - Մ.Մ.): ...Եւ մեք միաբանաւ ընդ բազմացն փախուցեալ եւ ազատեցաք... եւ եկեալ Վերին Գեղամայ դարիպ եւ ակտարական. եւ հասաք շրջագայութեամբ ի յաստուածապահ յամուրն Ծար»⁵⁵:

Փաստորեն, նմանօրինակ արշավանքները հանգեցրել են ոչ միայն Հայաստանից տարբեր ուղղություններով արտագաղթի, այլև ներքին միգրացիայի՝ դեպի Հայաստանի հարաբերականորեն ապահով վայրեր,

⁵⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 171-172, հ. 2, էջ 266-267, 355, 393, 518. **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԶ., էջ 630: Նշվածներից միայն մեկ տեղում է հիշատակվում Բիթլիսը (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 171-172):

⁵¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Աղբյուրկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1964, էջ 144:

⁵² Տե՛ս անդ., էջ 32-33:

⁵³ Տե՛ս ՄՄ, Հ^տ 6273, էջ 438-440 (տե՛ս Մ. Զուլալյան, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 118):

⁵⁴ Տե՛ս Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մ. Ա., Վիեննա, 1911, էջ 24:

⁵⁵ ՄՄ, Հ^տ 6282, էջ 625ա-բ (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 275):

ինչպիսին շատ հաճախ հանդիսացել է հայ մելիքական իշխանությունների գտնվող Ծարը: Ուշագրավ է նաև, որ ներքին միգրացիան, ըստ այս հիշատակարանի եւ վերը քննարկված այլ օրինակների, հաճախ կրել է ժամանակավոր բնույթ: Հիշատակվում են ներքին միգրացիայի այլ օրինակներ եւս: Ըստ Նորատուզի Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության՝ Գեղարքունիքի մելիքական 4 ընտանիքներից մեկը՝ Մելիք-Ազարյանները, այդտեղ են հաստատվել ԺԶ. դարի կեսերին՝ տեղափոխվելով Գանձակ (Քյոսամահմատ) գյուղից⁵⁶: Գյուղամիջուկ կան 1550 եւ 1553 թթ. թվագրվող ջուղայեցի ընտանիքի խաչքարեր⁵⁷, որոնք դաշտային հատվածներից լեռնային տեղանքում ընտանիքներով պատասպարումների լուռ վկաներն են: Հետաքրքիր է Սիսիանի Անգեղակոթ գյուղում 1549 թ. մի վիմագիր արձանագրություն, որտեղ պատմվում է 4 եղբայրների կողմից իրենց հոր տապանաքարի կանգնեցման մասին՝ նշելով, որ գյուղը 7 տարի ավերակ վիճակում է եղել⁵⁸: Այստեղ փաստվում է ռազմական գործողությունների տարածումը նույնիսկ լեռնային այս շրջանում:

Սեֆյանների ռազմարշավները եւ «մեռյալ տարածություն» ստեղծման քաղաքականությունը շարունակվել է նաև 1553 թ.: Այդ տարի Իգնատիոս գրիչը հաղորդում է, որ Թահմասպ Ա.-ն 3 տարի անընդմեջ ամայացրել է Քաջբերունիքը (Արճեշը) եւ Վանա լճի շրջակայքը, կոտորել բնակիչներին⁵⁹: Ժամանակակից հեղինակի հավաստմամբ՝ 1553 թ. շահը Կապանից մինչեւ Սիս բոլոր քրիստոնյաներին փախուստի է մատնել՝ սպանելով Արճեշի միաբաններին, կտրելով իւրաթի եւ Արձկեի այգիները, այրելով Տարոնի արտերը եւ Բասենը⁶⁰:

Օսմանյան կայսրությունը պատասխան գործողությունների է դիմել 1554 թ.: Նրանք գրավել են Արարատյան դաշտը, Նախիջևանը եւ Սյունիքը: Թուրք պատմիչ Փեչեւին նշում է, որ 1554 թ. Շորագյալում թուրքերը հիմնովին կործանել ու ավերել են բարեչեն գյուղերը, ապա նույնն արել Երեւանում եւ Նախիջևանում՝ ամայացնելով քաղաքներն ու գյուղերը⁶¹: Թուրք հեղինակի տեղեկությունները հաստատվում են նաև հայկական սկզբնաղբյուրներով, ընդ որում՝ ասվում է, որ 1554 թ. սուլթան

⁵⁶ Տե՛ս ԴՀՎ, պր. IV, էջ 11, 15:

⁵⁷ Տե՛ս անդ, էջ 23-24:

⁵⁸ Տե՛ս ԴՀՎ, պր. II, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, 1960, էջ 120:

⁵⁹ Տե՛ս Մ. Зудалян, նշվ. աշխ., էջ 81:

⁶⁰ Տե՛ս «Ժամանակագրություն» (XI-XVIII դդ.), տպագր. պատրաստեց՝ Ն. Պողարյան, ԲՍ, թ. 9, 1969, էջ 275:

⁶¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա., կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երեւան, 1961, էջ 33:

Սուլեյման Ա.-ն (1520-1566) Սեֆյանների դեմ արշավանքի ժամանակ այրեց Նախիջևեանը եւ ավերեց «բազում գաւառս ի հայոց»⁶², ինչպես նաեւ «զՅերեւան եւ զՆախչուան զամենայն գերի բերին»⁶³: Փեչեւին օսմանյան բանակի վայրագուկոյունների ու երիտասարդների զանգվածային գերեվարման մասին հպարտորեն պատմում է. «Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերն այն աստիճան ամայացել, ավերվել եւ բուերի ու ագռավների բնակավայրեր էին դարձել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»⁶⁴:

Այսպիսով, 1548-1554 թթ. ռազմական գործողուկոյունների անմիջական հետեւանքը դարձան Բարձր Հայքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Արարատյան դաշտի, Շիրակի, Սյունիքի, Նախիջևեանի եւ հայկական այլ տարածքների ցանքատարածուկոյունների մեծ մասի ոչնչացումն ու բնակչուկոյուն սնանկացումը⁶⁵: Սա էլ իր հերթին նպաստում էր տեղաբնիկ բնակչուկոյուն շրջանում ժողովրդագրական ճգնաժամի առաջացմանը: Առանձնակի բարձր է եղել մահացուկոյուն գործակիցը, ինչն ապացուցվում է ոչ միայն մատենագրական տեղեկուկոյուններով, այլեւ հնագիտական նյուկոյուն: Ուսումնասիրելով Արեւելյան Հայաստանի մի քանի շրջաններում (ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում եւ Գանձակ-Գարդմանում) ԺԶ. դարի՝ միայն հստակ թվագրում ունեցող շուրջ 540 տապանագրերն ու խաչքար-մահարձանների վիմագրերը՝ հաշվարկի միջոցով դուրս ենք բերել ուշագրավ վիճակագրուկոյուն: Ըստ այդմ՝ մեր կողմից հաշվարկված 540 թվակիր տապանաքարերից եւ խաչքար-մահարձաններից 88-ը 1548-1554 թթ. են թվագրվում՝ վերաբերելով շուրջ 100 անձի⁶⁶: Փաստորեն, ստացված թիվն ընդհանուրի մեջ ավելի քան 16 %-ն է կազմում, ինչը ցույց է տալիս մահացուկոյուն գործակցի՝ ակնհայտորեն բարձր լինելու փաստը:

⁶² «Ժամանակագրուկոյուն» (XI-XVIII դդ.), էջ 277:

⁶³ Տեն «Մանր ժամանակագրուկոյուններ», հ. 1, էջ 157: Առաքել Դավրիժեցու հաղորդմանը՝ 1554 թ. սուլթանը բազմաթիվ գերիներ է տարել միայն Նախիջևեանից (տես **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԶ., էջ 630):

⁶⁴ Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 33:

⁶⁵ Տեն Հայ ժողովրդի պատմուկոյուն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Երեւան, 1972, էջ 84:

⁶⁶ Հաշվարկի համար դիտարկված վիմագրերը տես ԴՀՎ, պր. II, էջ 120, 121, 122, 124, պր. III, էջ 17-19, 163, 178-179, 185, 186-190, 204-205, պր. IV, էջ 23-24, 52-63, 65, 80-82, 85-86, 90-91, 94-95, 98-100, 107, 113-115, 118, 130, 131-134, 137-141, 171-173, 178, 179-181, 192-193, 200, 206-207, 210-213, 215-220, 231-233, 236-241, 244-247, 248-250, 254-259, 269-275, 285, 294-295, 305-307, 309-310, 319-325, 329-332, 351-352, 356-359, 361, 364-367, 372-374, պր. V, էջ 95-96, 159, 220, 222, 233-237, 243, 244, 246, պր. IX, էջ 47-48, 221, 223, 296-297, 320-321, 323-328, 444-445:

1555 թ. մայիսի 29-ին կնքված Ամասիայի հաշտության պայմանագրով Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության եւ Սեֆյան Պարսկաստանի միջեւ: Պայմանագրով Կարսի շրջանը չեզոք գոտի էր դառնում երկու տերությունների միջեւ: Այդ գոտու սահմաններն արեւելքում հասնում էին մինչեւ Ախուրյան գետ, հարավում՝ Կաղզվանից հարավ, հյուսիսում՝ Ջարիչատից հյուսիս (Չըլդըր լճից հարավ), արեւմուտքում՝ Օլլթի գետից արեւելք⁶⁷: Չեզոք գոտու ստեղծումը կատարյալ արհավիրք էր Կարսի շրջանի տեղաբնիկ հայ բնակչության համար, քանի որ տարածքը պետք է ամայացվեր ու անմարդաբնակ դարձվեր⁶⁸: Վրացական սկզբնաղբյուրներում ներկայացված է Կարսի ավերումը եւ օսմանահայատակների մի մասի կոտորածն ու մյուս մասի վերաբնակեցումը Կարսից՝ Թահմասպ Ա.-ի որդի Միրզա-Իսմայիլի կողմից⁶⁹:

Ամասիայի պայմանագիրը շուրջ երկու տասնամյակ Հայաստանին հարաբերական անդորր բերեց, ինչը խաթարվեց 1570-ական թթ. երկրորդ կեսին: 1576 թ. Կարսը 58 օրում վերակառուցվել է, ընդ որում՝ բեյլերբեյի պալատը կառուցվեց հայերի կողմից, իսկ պարիսպներից ներս կառուցվել են նաեւ բնակելի տներ⁷⁰, եւ 1577 թ. սուլթան Մուրադ Գ.-ն (1574-1595) պատերազմ է հայտարարել Սեֆյանների դեմ⁷¹: Թուրք պատմագիր Սելանիկի Մուստաֆա էֆենդիի (ԺՁ. դարի երկրորդ կես - ԺԷ. դար) տարեգրության համաձայն՝ 1578 թ. էրզրումի պարսպից դուրս բնակվող «ռայաները» (այսինքն՝ հայերը) հանձն առան նոր պարսպի շինարարությունը, քանի որ իրենց տները պարսպից դուրս էին գտնվում եւ ապահովված չէին Սեֆյանների հնարավոր հարձակումից⁷²: Փաստորեն, օգտագործվել է հայ բնակչության աշխատուժը: Խլաթում ընդօրինակված ձեռագրի մի հիշատակարանում ներկայացվում է, թե ինչպես Մուստաֆա Լալա փաշան

⁶⁷ Տե՛ս «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ., Երեւան, 2008, էջ 49, քարտեզ՝ «Հայաստանը 16-րդ դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները», հեղինակ՝ Գ. Բաղդյան, մասշտաբ՝ 1:3 600 000:

⁶⁸ Տե՛ս Լ. Նաջարյան, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին եւ Հայաստանը, Երեւան, 1961, էջ 111: Մ. Զուլայյան, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, 1980, էջ 45: Նույնի Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գ. Ա., Երեւան, 1990, էջ 120-121:

⁶⁹ Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Քեյ, հ. Բ. (ԺԳ.-ԺԸ. դդ.), Երեւան, 1936, էջ 136: Հատկանշական է, որ ԺԳ. դ. Կարսի բնակչության թիվն անցել է 50 հազարից (Տե՛ս Թ. Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 167):

⁷⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ., էջ 119:

⁷¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 159:

⁷² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ., էջ 119:

Բասենի դաշտում ժողովում է շրջակայքի տասնյակ հազարավոր հայ աշխատավորներին ու վերաչինում Կարսը, եւ երբ ավարտեցին շինարարութիւնը, «ասպատակեալ գնացին դէպ յարեւելս՝ ի յերկիրն Կարմիր գլխոյ մինչ զքսան աւուր ճանապարհն աւելի ի Կարսա, Յերեւան, ի Շրուան եւ մինչ ի Թագաւորական մեծ քաղաքն Տփիղս: Զայս ամենայն քաղաքս եւ գաւառս անմարդաբնակ արարին եւ զմեծ աթոռն սբ. էջմիածին ցիր եւ ցան արարին՝ զկաթողիկոսն եւ զմիաբանքն. եւ յաւուր միում գնացեալ ի վերայ Երեւան քաղաքին եւ բերին գերի ոգիք ԻԴՆԻ (24 000) քահանայք եւ ռամիկք, կանայք եւ տղայք»⁷³:

Բռնագաղթի մասին տեղեկութիւններ հաղորդում են բազմաթիւ հեղինակներ, սակայն նրանց ներկայացրած թվերը տարբեր են: Այսպէս, Ժամանակագրութիւններից մեկում ներկայացվում է, որ օսմանյան զորքերը 1579 թ. «գերեւան գերեցին ՌԼ (30000)»⁷⁴, իսկ մեկ այլ Ժամանակագրի համաձայն՝ գերեցին Երեւան քաղաքի եւ հարեւան 18 գյուղերի բնակիչներին, եւ «ցրեցին զկին եւ զտղայ յամենայն աշխարհ»⁷⁵: Ըստ ԺԶ. դարի մատենագիր Հովհաննես (Հովհաննիսիկ) Ծարեցու՝ 1579 թ. Մուրադ Գ. սուլթանը Սեֆյանների դեմ ուղարկեց Լալա փաշային, ով եկավ «յերկիրն Արարատեան, եւ գերեաց ընդ Հայ եւ ընդ Տաճիկ՝ թուով ԿՆ (60 հազար - Մ.Մ.)». եւ տարեալ խաղացոյց յերկիրն Հոռոմոց»⁷⁶: Ըստ 1579 թ. մի հիշատակարանի՝ Լալա փաշան Նախիջեւան քաղաքից եւ այլ գավառներից ավելի քան 40 հազար մարդ է գերել⁷⁷: Հատկանշական է, որ երբ 1579 թ. Անատոլիայի բեյլերբեյի Զաֆեր փաշան Կարսից շարժվում է «բարեչեն Երեւանի երկիրը», Թոքմաք խանը թալանում ու հրկիզում է Երեւանը եւ քաղաքից ու շրջակայքից գերի տանում 20 հազար մարդ (մեծ մասը՝ հայեր), որոնց ուղարկում է ստրկավաճառական շուկաներ⁷⁸: 1579 թ. Սեֆյան մեկ այլ հրամանատար՝ Զիյադ օղլին, «Գենջե քաղաքի եւ նրա գյուղերում ու գավառներում ապրող բոլոր ռայաներին՝ իրենց բոլոր մթերքներով, հագուստներով եւ կենդանիներով տեղահանում է: Շատերին բարձրացնում է լեռները, իսկ մնացածին՝ իր զինվորների հետ

⁷³ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 251-252:

⁷⁴ Անդ, էջ 355:

⁷⁵ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 172:

⁷⁶ «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ ծարեցի Յովհանէս վարդապետին» (այսուհետ՝ Հովհաննես Ծարեցի), տնս Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, գլ. ԾԵ, էջ 607: Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 241:

⁷⁷ Տնս Ա. Խառատայան, նշվ. աշխ., էջ 331:

⁷⁸ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 124: Հմմտ. Danişmend I., İzahli Osmanlı Tarihi Kronolojisi, İstanbul, 1950, III, էջ 44, 45:

միասին, քչում-տանում է Արագ գետի եզերքը: Նրա նպատակն էր պահել եւ պաշտպանել ռայաներին»⁷⁹: Այս առնչությամբ հետաքրքրական է, որ ներկայիս Այգեհատ գյուղից արեւելք՝ Քոբայրի վանքից 1 կմ հյուսիս, Իգահատ գյուղատեղը լքվել է 1579 թ. հետո, եւ այլեւս նրա մասին որեւէ հիշատակություն հետագայում չի պահպանվել⁸⁰: Օսմանյան արշավանքների ավարառությունից ու կոտորածից զերծ են մնացել միայն Ծարից արեւմուտք ընկած գավառները, սակայն 1578-1580 թթ. սով է բռնկվել գավառի կենտրոն Մեծ Մազրայում, որտեղ կենտրոնացած մեծաթիվ բնակչությանը սնունդը չէր բավականացնում⁸¹:

Ի մի բերելով 1579 թ. բռնագաղթի վերաբերյալ սկզբնաղբյուրներում հիշատակվող թվերը՝ պետք է փաստել, որ 24 հազար թիվը վերաբերում է Երեւան քաղաքին, 30 հազարը՝ Երեւանին եւ հարեւան 18 գյուղերին, իսկ 60 հազարը՝ Արարատյան կուսակալությանը: Ընդ որում՝ այս վերջին թվին պետք է գումարել նաեւ մինչ այդ Արարատյան կուսակալությունից Թոքմաք խանի կողմից գերեվարված 20 հազար մարդկանց ու Լալա փաշայի կողմից Նախիջեւանից բռնագաղթվածներին, եւ տեղահանվածների ընդհանուր թիվը կգերազանցի 100 հազարը:

Հովհաննես Ծարեցին նկարագրում է 1579 թ. օսմանյան ավերիչ արշավանքի հետեւանքները. «Եղեւ սաստիկ եւ մեծ տարածամ մահ ի յԱտրպատական եւ յամենայն Աղուանս, եւ կոտորէր զբազումս յամենայն ազգաց»⁸²: Նման պայմաններում օսմանյան բանակը, Դերբենտում ժողովելով «Ղայթաղ» կոչվող թաթարներին եւ «Լակզիքն» (լեզգիներ) կովկասյան լեռնականներին, անցավ Կուր գետը, փախուստի մատնեց Գանձակի եւ Պարտավի իշխաններին, գերեց, շատերին սպանեց Գանձակի, Պարտավի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Դիզակի լեռներում եւ դաշտերում՝ Չարեք գետից մինչեւ Երասխ, եւ 4-5 օր հետո վերադարձավ իր զորակայանը⁸³: Նույն թվին ժանտախտից եւ կոտորածից բացի եղավ նաեւ սաստիկ սով, հումակերություն, քանզի «ամենայն գաւառք Հայոց, որք ընդ իշխանութեամբ կարմրագլխոցն կային, քակեալք աւերեցան»: Սոսկալի է Հովհաննես Ծարեցու նկարագրությունը սովի եւ դրա պատճառած թշվառության ու բարձր մահացության մասին: Հաջորդ գարնանը հացի բերքը ոչնչացել էր, դիակները փողոցների այս կամ այն անկյունում թափված

⁷⁹ Անդ, էջ 134:

⁸⁰ Տե՛ս ԴՇՎ, սյր. IX, էջ 339:

⁸¹ Տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 400-402:

⁸² Տե՛ս Հովհաննես Ծարեցի, էջ 608: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 242:

⁸³ Անդ:

էին, անգամ տանուտերերի եւ մեծատունների որդիներին էին ուշ թաղում: Եղան մարդակերության եւ գայլերի կողմից մարդկանց հոշոտման դեպքեր: Սովը շարունակվեց 1579-1580 թթ., եւ «գլխիւ մահուամբ եւ սովու եւ սրով մեռելոցն եւ գերելոցն բնաւ ոչ կարեմ ընդ թիւ բերել...»⁸⁴:

Օսմանյան զորքերը 1580 թ. հերթական անգամ ներխուժել են Արեւելյան Հայաստան՝ Արցախ, Գեղարքունիք եւ Երեւան՝ առանձնակի դաժանությամբ վարվելով Երեւանի բնակչության հետ: Քաղաքի հոյակերպ շինություններն ավերելուց հետո նրանք կուսակալությունից բռնագաղթեցրել են շուրջ 20 հազար կանանց եւ երեխաների⁸⁵: 1580 թ. Օսման Յուզղեմիրի ասպատակությունների մասին ձեռագրի մի հիշատակարանում Իսրայել գրիչը հաղորդում է հետեւյալը. «Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն եւ գերեաց բազում տեղիս՝ Ղարայպաղն, Ղարաղաջն, Խաչէն, Վարանդայ մինչեւ Տիզակ... երեկ Քուրտն էառ Խոյ, Սալմաստ եւ Նախչվան եւ գերեցին եւ թալնեցին... վայ եւ եղուկ ազգիս Հայոց...»⁸⁶:

1580-ական թթ. եւս քանիցս հիշատակվում են հայ բնակչության բռնագաղթեր, իսկ պատերազմական գործողությունները տարբեր վայրերում հարուցել են հայ բնակչության զանգվածային տեղաշարժեր: Այսպես, 1581 թ. Արարատյան երկրից գերվել է եւս 240 հազար մարդ⁸⁷: 1582 թ. Գեղարքունիքը եւս ավերածության է ենթարկվել, մեկիք Հախնազարը ժողովրդի հետ հեռացել է Մազրայից, սակայն 1591 թ. վերադարձել է եւ հանձն առել վերաշինման գործը⁸⁸: 1583 թ. Երեւանից եւս մեկ անգամ գերեվարություն է կազմակերպվել⁸⁹: 1584 թ. Բասենի Ծառս գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Դավիթ գրիչը հայտնում է, որ ինքը փախել է Երեւանից, երբ Յարհազ փաշան քաղաքի եկեղեցիների եւ տապանաքարերի հաշվին ու հայ աշխատուժով կառուցել է հզոր բերդը, «Թաջալ (իմա՝ թաթար - ՄՄ) ազգն արձակել ի վերայ քրիստոնէից ազգիս», եւ շատերը սպանվել ու շատերն էլ տարվել են գերության մինչեւ Գանձակ⁹⁰: 1584 թ. մեկ այլ հեղինակի մոտ կարդում ենք. «...հասեալ ի մուտս Շարվանա եւ գերեաց զազգս Հա[յ]կազանց եւթանասուն ԲՌ (72000) գերի տարան այր ու կին, ծեր եւ տղա, եւ այլ

⁸⁴ Անդ, էջ 609-611:

⁸⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա., էջ 46-47:

⁸⁶ ՄՄ, Հ^մ 4173, էջ 95ա (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 252):

⁸⁷ Տե՛ս Ա. Խառատյան, նշվ. աշխ., էջ 331:

⁸⁸ Տե՛ս ԴՀՎ, պր. IV, էջ 63: Ս. Բաթխուդարյան, Գեղարքունիքի մեկիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, ԲՄ, թ. 8, 1967, էջ 211:

⁸⁹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 159:

⁹⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 252:

Թիւն միայն հայրն գիտի, յետո այլ տարին (1585 թ. - Մ.Մ.) գերեցին Արարատան գաւառն ԿՌ (60000), եւ եղաւ սով սաստիկ մեծ եւ նուագեցաւ զթումս Հայոց...»⁹¹: 1584-1585 թթ. դեպքերի առնչությամբ Բարսեղ Վարագեցու հիշատակարանում պատմվում է Օսման փաշայի զորքերի կողմից Էրզրումի նահանգում երիտասարդ աղջիկների եւ տղաների գերեվարման մասին: Ըստ նրա՝ Սինան փաշայի զորքերը Վանից նահանջելիս «բազում գիւղ եւ գաւառ անբնակ արարին. կար որ ի յիւրեանց հարկատուացն գերի վարեցին եւ յՍտամպոլ հասուցին», իսկ նրանից հետո ժամանեց Փահրադ փաշան, եւ «Երեւանայ աշխարհն, քաղաքն եւ երկիրն, եւ ամենայն շուրջագայ գաւառքն ի յանօրէն ազգացն Պարսից եւ Իսմայելացոց սրբաջինջ եղեւ ամենայն աշխարհս քրիստոնէից...»⁹²: Դավիթ եպիսկոպոսը Գեղամա գավառից Բասեն փախչելուց հետո 1587 թ. գրում է, որ Երեւանի նախկին տեր Մահմադ խանը Փարհատ փաշայի արշավանքի ժամանակ «...եհան երկիրն ամէն անողորմաբար եւ տարաւ հետ իւրն, այնուհետեւ հսկա բազմությամբ հասավ Գեղամա երկիր, ... Բազումք փախան անդի եւ դարձան յետս եւ այլքն քշեցին մինչեւ Գանջայ...»⁹³: Չնայած թվարկված բռնագաղթերին եւ հայ բնակչության արտագաղթին, ըստ Ա. Մելքոնյանի, երկիրը շարունակում էր հիմնականում բնակեցված լինել տեղաբնիկ հայ տարրով⁹⁴: Եւ իսկապես, վերը ներկայացված դեպքերի մեծ մասում ինքնակամ գանգավածային միգրացիան նախեւառաջ կրում էր ներքին բնույթ՝ հայրենիքի ոչ ապահով տեղանքից դեպի ավելի ապահով տարածք:

Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ Օսմանյան կայսրութիւնը ծանր հարկապահանջութիւն եւ կրոնական սահմանափակումներ է իրականացրել Արեւելյան Հայաստանում, ինչը 1586 թ. հանգեցրել է արտագաղթի նոր ալիքի ձեւավորմանը. «...յազգէն Հայոց գնացին Սարուխան բէկն եւ իւր եղբայր Նազարն ի յՈսկանապատ գեղջէ. Օղլան քշելն եւ իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ: Ջալալ բէկն իւր եղբօր որդւովքն ի Խաչենայ: Մելիք Սուլումն ի Դիզակայ. Մելիք Փաշիկն ի Քօջիգ գեղջէ. Մելիք Բարէն ի Բրիտիս գեղջէ. Մելիքսէթ եպիսկոպոսն ի վերին Ջակամայ ի Մելիքգատայ գեղջէ. Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանածախ գեղջէ: Այլեւ չորս գեղ ի Դիզակա երկրէն միահաղոյն չուեցին եւ գնացին յերկիրն Պարսից, եւ շահն բնակեցոյց զնոսա ի քաղաքն Ասպահան:

⁹¹ ՄՄ, Հ^տ 9223 ԻԷ., էջ 1ա (տե՛ս անդ, էջ 253):

⁹² ԴՀՊ, գ. Ժ., էջ 34-37:

⁹³ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 301:

⁹⁴ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. 2, գ. 2, էջ 627:

Այլեւ երեք մասն ի ժողովրդոց՝ Դաշտ կոչեցեալ տեղին՝ որ է ի գաւառին Գողթան՝ մերձ յԱգուլիս՝ գնացին յերկիրն Պարսից, եւ շահն զնոսա եւս բնակեցոյց ի քաղաքն Ասպահան: Եւ է պատճառ Դիզակեցոց եւ դաշտեցոց գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն եւ կողոպտելն եւ կուռէճութիւն առնելն, եւ անխնայ սպանանելն զբրիստոնեայսն»⁹⁵: Սովորական բնույթ էր ստացել բնակչութեան զանգվածային օգտագործումը զորքի պարենավորման եւ շինարարական աշխատանքներում: Մեհմեդ Գ. սուլթանի գահակալութեան առաջին տարում (1595 թ.) Ֆահրադ փաշայի փոխարեն վրաց արքա Սիմոնի դեմ ուղարկված ներքինի Ջաֆարը Արատոյան դաշտում հսկայական զորք է հավաքել եւ պատվիրել հեռավոր գյուղերից ու քաղաքներից պարենամթերք բերել զորքի եւ ձիերի համար. «Այլ եւ թիւս քսան հազարաց արանց արկեալ ռամկաց Հայոց եւ տաճկաց ամենայն աշխարհաց ունելով ի ձեռս իւրեանց որթուց եւ թիաց, տապարաց, եւ կացնաց, բահաց, եւ փայտատաց, բրիչ տանց հիմանց, այլ եւ խիստ էառ հարկս ի ժողովրդենէ արտաքոյ նոմոսաց իւրեանց»⁹⁶:

Սովր, անասունների անկումը եւ մահատարածամը (ժանտախտը) պատերազմական գործողությունների անբաժան ուղեկիցներն էին: Ինչպես արդեն նշել ենք, Հովհաննես Ծարեցին ներկայացնում է 1579-1580 թթ. սոսկալի սովը եւ ժանտախտի համաճարակը Արեւելյան Հայաստանում: Սովի առաջացմանը նպաստում էին ոչ միայն թուրք-պարսկական ռազմական բախումները, այլեւ Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը եւ հատկապես դարավերջին բռնկված ջալալիական ելույթները: Սկզբնաղբյուրներում հիշատակվում են 1595 եւ 1598 թթ. անասունների խիստ անկումը⁹⁷, 1599 թ. մեծ երաշտը եւ սերմերի չորանալը⁹⁸, իսկ 1600 թ. «եղեւ մեծ սով ընդ ամենայն երկիր եւ անկեալ լինէին դիակուռք նոցա յամենայն անցս ճանապարհաց իբրեւ զտարափս կարկտի եւ ոչ ոք էր, որ թաղէր զնոսա, զի ամենքեան յօժարեցան ուտել զանսուրբս եւ բազումք զմիս գազանաց: Ի սոյն ամի անկաւ տարածամ մահ»⁹⁹: Ըստ Գրիգոր Դարանաղցու՝ 1600 թ. սովի ժամանակ Երզնկայի

⁹⁵ Առաքել Դավրիժեցի, գլ. Գ., էջ 15-16: Հմմտ. Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 67, 115:

⁹⁶ Հովհաննես Ծարեցի, էջ 617:

⁹⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 271, 272: Առաքել Դավրիժեցի, գլ. ԾԶ., էջ 632: Մամուլէ Անեցի եւ շարունակողներ, «Ժամանակագրություն», աշխ.՝ Կ. Մաթետոսյանի, Երևան, 2014, էջ 322: «Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կանախեցոյ կամ Դարանաղցոյ», հրատ.՝ Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 50:

⁹⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 356:

⁹⁹ Աղլ:

Շողա գյուղից ենովք անունով մեկը Երզնկայից Էրզրում գնալու ճանապարհին սովից մահացած 300 մարդ է տեսել¹⁰⁰:

Էլ ավելի շատ են մահտարածամի մասին տեղեկությունները, սակայն ի տարբերություն արեւմտաեվրոպական տարբեր սկզբնաղբյուրների, ցավոք, հայկական սկզբնաղբյուրները գոնե տեղային վիճակագրություն չեն ներկայացնում համաճարակի պատճառած զոհերի թվի վերաբերյալ: Ժանտախտի համաճարակ է տարածվել 1500, 1503, 1505, 1533, 1549, 1551, 1554, 1563, 1565, 1568, 1575, 1579 թթ.¹⁰¹: Բացի «մահտարածամ» եզրույթից, սկզբնաղբյուրներում ժանտախտի համաճարակի համար հաճախ օգտագործվում են «մահ տարածեցաւ», «մահ եկն», «սաստիկ մահ եկաւ», «մահ տարածեցաւ յամենայն երկիր», «մահ, անապատ ի մարդկանէ» եւ նմանատիպ այլ ձեւակերպումներ: Առանձին դեպքերում մատենագիրները ներկայացնում են համաճարակի որոշ մանրամասներ: 1533 թ. «մահտարածամ եղեւ ի վերայ աշխարհի եւ բազում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն Աստուծոյ եւ մեռան. քանի հայր եւ մայր անորդի եղան եւ անդուստր եւ քանի քոյր առանց եղբայր եւ եղբայր առանց քոյր մնացին. քանի քոյր ու եղբայր ի մէկ գիշերի մեռան. եւ ո՞վ կարէ պատմել զաղէտ եւ զկսկիծն ծնողացն եւ զընտանեացն. սիրելեացն եւ զբարեկամացն. բայց Աստուծոյ միայն է գիտելի...: Եւ յորժամ եղեւ այս պատուհասս՝ նա զայն աչօք տեսաք՝ որ ով ոք փախաւ՝ ապրեցաւ...: ...ես մեղաւոր Յօհաննէս զայս դառն օրս աչոքս եմ տեսեր...»¹⁰²: 1549 թ. Սողքի Բարկիս (Բարկույք) գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Եղեւ մահտարածամ եւ մեռան անթիւ տղայք, հենց որ կալոյ ժամանակին տղայ չկար որ զկաման քչեր...»¹⁰³: Փաստորեն, ժանտախտը մեծ հարված էր հասցնում նաեւ գյուղատնտեսական աշխատանքներին՝ խանգարելով սննդամթերքի արտադրությունը:

Ժանտախտի մասին մատենագրական տեղեկությունները քննություն անելիս հարկավոր է ուշադրություն դարձնել տապանագրերին ու խաչքար-մահարձանների վիմագրերին: Ծիշտ է, հնարավոր չէ առանց

¹⁰⁰ Տե՛ս «Համառոտ բիրիոգրաֆիա՝ Հայկական ՍՍՌ- Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների», հրատ.՝ Ա. Արբահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երեւան, 1941, էջ 214:

¹⁰¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 146, 172, հ. 2, էջ 355, 518: «Ժամանակագրություն» (XI-XVIII դդ.), էջ 273, 275, 278: Առաքել Դավրիժեցի, գլ. ԾԶ., էջ 630, 631: Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 304: Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 409:

¹⁰² Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 228:

¹⁰³ ՄՄ, Հ^փ 9222, հիշ. Ժ. (տե՛ս Մ. Զուլայյան, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 117):

Հնագիտական լրացուցիչ ուսումնասիրման՝ գուտ վիմագրերով պարզել գերեզմաններում ամփոփված անձանց մահվան պատճառը, սակայն պատերազմական գործողությունների կողքին ժանտախտի համաճարակի եւ սովի մասին հիշատակումների տարիներին դիտարկվում է տապանաքարերի թվի կտրուկ աճ: Ինչպես արդեն նշել ենք, Արեւելյան Հայաստանի մի քանի շրջաններում (ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում եւ Գանձակ-Գարդմանում) հաշվարկել ենք ԺԶ. դարի՝ միայն հստակ թվագրում ունեցող շուրջ 540 տապանաքարեր ու խաչքար-մահարձանների վիմագրեր: Ժանտախտի եւ սովի մասին հիշատակումների մի քանի տարիների համար ստացվել է հետեւյալ վիճակագրությունը. 1505 թ.՝ 8⁰⁴, 1549 թ.՝ 12⁰⁵, 1551 թ.՝ 40⁰⁶, 1575 թ.՝ 11¹⁰⁷, 1581 թ.՝ 18¹⁰⁸: Այս տապանաքարերը հաշվարկված թվակիր հուշակոթողների մեջ կազմում են համապատասխանաբար 1.5, 2.2, 7.4, 2 եւ 3.3 %-ը:

Այսպիսով, ԺԶ. դարում Հայաստանում Օսմանյան կայսրության եւ Սեֆյան տերության միջեւ պատերազմների եւ դրանց միջեւ կարճատեւ դադարների պայմաններում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացներին բնորոշ էին հաճախ կրկնվող բռնագաղթերը, զանգվածային արտագաղթը, սննդամթերքի արտադրության տեւական արգելակումները, համաճարակները (հատկապես՝ ժանտախտը), սովը: Թեեւ տարածքի մեծ մասի յուրացվածությունը առաջին հայացքից բնակչության բնական աճը սահմանափակող գործոն էր, այդուհանդերձ յուրաքանչյուր բռնագաղթից կամ զանգվածային մահացությունից հետո ազատված հողերի վերաօգտագործման համար աշխատանքային ռեսուրսների անհրաժեշտությունը հայ բնակչության ամուր ներէթնիկ սոցիալական կառուցվածքի շնորհիվ հանգեցնում էր բնակչության թվի կտրուկ աճի: Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ, չնայած 1579-1585 թթ. քանիցս կրկնված բռնագաղթերին, ընդամենը երկու տասնամյակ անց

¹⁰⁴ Տե՛ս ԴՎԿ, պր. III, էջ 112, պր. IV, էջ 28-29, 31-37, 42, 47-48, 98-100, 105, 106, 319-325:

¹⁰⁵ Տե՛ս ԴՎԿ, պր. II, էջ 120, 121, 122, պր. IV, էջ 80-82, 90-91, 98-100, 137-141, 248-250, 356-359, պր. V, էջ 220, 222:

¹⁰⁶ Տե՛ս ԴՎԿ, պր. III, էջ 17-19, 163, 178-179, 185, 186-190, պր. IV, էջ 52-63, 65, 82, 98-100, 107, 113-115, 118, 130, 131-134, 171-173, 178, 192-193, 206-207, 236-241, 269-275, 285, 294-295, 305-307, 309-310, 319-325, 329-332, 351-352, 364-367, պր. V, էջ 95-96, 220, 222, 243, պր. IX, էջ 47-48, 221, 223, 323-328:

¹⁰⁷ Տե՛ս ԴՎԿ, պր. II, էջ 56, պր. III, էջ 104, 200-202, պր. IV, էջ 85-86, 236-241, 269-275, 285, 364-367:

¹⁰⁸ Տե՛ս ԴՎԿ, պր. II, էջ 76, 112, պր. IV, էջ 101, 205, 236-241, 281-283, 285, պր. V, էջ 164-168, 233-237, պր. IX, էջ 323-328:

Արարատյան կուսակալութիւնները, որը շատ առատ էր հողային պաշարներով, պարսից շահ Աբաս Ա.-ի (1587-1629) բռնագաղթի (1604 թ.) նախօրերին վերստին հայ բնակչութեան հոծ զանգված էր կենտրոնացած:

РЕЗЮМЕ

В XVI веке Армения стала ареной постоянных войн между Османской империей и Сефевидской Персией. Эти войны привели к некоторым негативным изменениям тенденций и особенностей развития демографических процессов в Армении. Согласно османским, армянским и европейским источникам, завоеватели часто предпринимали политику массовых депортаций (тур. - «сюргюн») армянского населения. Продолжительные войны заставляли часть населения уезжать в европейские страны. Чума и голод также были важными составляющими демографических процессов. Согласно нашим наблюдениям, в армянских рукописях XVI века, где обычно авторы писали имена членов своих семей, несмотря на массовые депортации и высокую смертность, рождаемость попрежнему была высокой. Это привело нас к выводу, что после массовых депортаций нужда в обработке больших сельскохозяйственных земель способствовала росту рождаемости, а численность местного населения быстро восстанавливалась. Именно поэтому османские и сефевидские войска сталкивались примерно с одинаковым числом населения в местностях (например в Араратской долине), откуда они депортировали часть населения примерно 20 лет назад.

SUMMARY

Armenia was a battlefield between the Ottoman Empire and Safavid Persia during the 16th century. The wars between these countries led to some negative changes in trends and features of the demographic processes of Armenia. According to the Ottoman, Armenian and European sources, the foreign invaders used to make massive deportations (Turk. “sürgün”) of the Armenian population. Continuous wars forced a part of the native population to leave their historical settlements for the European countries. Plague and starvation were essential features of the demographic processes as well. Despite massive deportations and high mortality rate, according to observations based on contemporary Armenian manuscripts, where the authors also wrote the names of their family members, fertility rate of the Armenian population was still very high. This leads us to conclusion that after massive deportations the need for cultivating vast agricultural territories helped to have much higher fertility rate, and the native population could reach the previous figures in a short period of time. That is why the Ottoman and Safavid forces faced approximately the same number of population in the territories (e.g. in the Ararat Valley) from where they had deported a part of the population ca. 20 years before.

СОДЕРЖАНИЕ

ОТ РЕДАКЦИИ

ИЕРЕЙ ВОСКАН ОВАННИСЯН - Несмолкаемая колокольня.....5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II
на молебне во славу Родины и ее защитника -
армянского воинства..... 8

Поздравительное послание Его Святейшества Католикоса Всех Армян
Гарегина II по поводу праздника Благовещения..... 11

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,
сказанное в церкви св. Иоанна Гандзасарского монастыря..... 12

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,
сказанное в церкви Христа Всеспасителя г. Шуши..... 15

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

Проповедь иеромонаха Григориса Шогикяна, читанная
в Кафедральном соборе св. Эчмиадзина на св. Литургии
в праздник Благовещения Пресвятой Богородицы18

Проповедь епископа Геворга Сарояна,
читанная в Кафедральном соборе св. Эчмиадзина
в праздник Явления св. Креста и на св. Литургии
в 101-ую годовщину Геноцида армян.....23

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

СЕЙРАН ЗАКАРЯН - Гносеологические взгляды Иоанна Воротнеци..... 26

МИКАЕЛ МАЛХАСЯН - Тенденции и особенности демографических
процессов XVI века в Армении52

ТАМАРА ПОГОСЯН - Печатные книги XVII века на ашхарабаре.....	73
ДАВИД ДЖУЛХАКЯН - Исследование нового этапа арцахского движения в армянской историографии.....	92
ДАВИД ГЮРДЖИНЯН - Историко-лингвистический анализ слова «հաշիւաշինարան» (арменоцид).....	99

СООБЩЕНИЯ

АЙК АКОБЯН - История спасения новонайденного экземпляра первой армянской печатной книги “Урбатагирк”	114
СУСАННА АДАМЯН - Строительная деятельность архиепископа Месропа Смбатянца.....	122
МАРИНЕ ГЕВОРГЯН - Деятельность Самвела Шахмурадяна во время Арцахской освободительной войны.....	132

РЕЦЕНЗИИ И БИБЛИОГРАФИЯ

АЗАТ БОЗОЯН - Новый перевод труда историка Гевонда	140
--	-----

CONTENTS

EDITORIAL

REV. FR. VOSKAN HOVHANNISYAN - Unceasing campanile.....5

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,
during the requiem prayer for the soldiers defending the motherland..... 8

Congratulatory message of His Holiness Karekin II,
Catholicos of All Armenians, on the occasion of the Feast
of Annunciation..... 11

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,
at St. Hovhannes Church of Gandzassar.....12

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,
at Holy All-Savior Church of Shoushee.....15

RELIGIOUS STUDIES

Sermon of Rev. Fr. Grigoris Shokhikyan delivered during
the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin
on the occasion of the Feast of Annunciation18

Sermon of H.G. Bishop Gevork Saroyan delivered during
the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin
on the occasions of the Feast of the Apparition of the Holy Cross
and of the 101st anniversary of the Armenian Genocide23

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

SEYRAN ZAKARYAN - Epistemological views of Hovhan Vorotnetsi 26

MICHAEL MALKHASYAN - Tendencies and peculiarities of demographic
processes in Armenia in the 16th century.....52

TAMARA POGHOSYAN - Printed books in modern Armenian language in the 17 th century	73
DAVID JULHAKYAN - Study of the new phase of the Artsakh movement in the Armenian historiography	92
DAVID GYURJINYAN - Historical-linguistic research of the word «հայասպանություն» (Armenocide).....	99

ESSAYS

HAYK HAKOBYAN - Story of salvation of the newly found “Urbatagirk” (Friday Book)	114
SUSANNA ADAMYAN - Construction activities of Archbishop Mesrop Sembatiants	122
MARINE GEVORGYAN - The role of Samuel Shahmouradyan in the liberation war of Artsakh	132

LITERARY REVIEW

AZAT BOZOYAN - New translation of the work of historian Ghevond.....	140
---	-----

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տ. ՈՍԿԱՆ ՔՀՆՅ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Անլուելի զանգակատուն.....5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

- Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը
հայրենիքի եւ հայրենյաց պաշտպան զինվորների համար
աղոթքի արարողության ընթացքում 8
- Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի
շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով..... 11
- Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը
Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցում 12
- Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը
Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում 15

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- Տ. Գրիգորիս արեղա Շոխիկյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Աստվածածնի ավետման տոնին
մատուցված Ս. Պատարագին 18
- Տ. Գեորգ եպիսկոպոս Սարոյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Երեւման Սուրբ Խաչի տոնին
եւ Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին
մատուցված Ս. Պատարագին 23

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ** - Հովհան Որոտնեցու
ինացաբանական հայացքները..... 26
- ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ** - ԺԶ. դարի ժողովրդագրական
գործընթացների միտումներն ու առանձնահատկությունները
Հայաստանում 52

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ - ԺԷ. դարի աշխարհաբար տպագիր գրքերը	73
ԴԱՎԻԹ ԶՈՒԼՀԱԿՅԱՆ - Արցախյան շարժման նոր փուլի հետազոտությունը հայ պատմագիտության մեջ.....	92
ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ - Հայասպանություն բառի պատմալեզվաբանական քննությունը.....	99

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿ ՀԱԿՈՐՅԱՆ - Նորահայտ Ուրբաթագրքի փրկության պատմությունը.....	114
ՍՈՒՍԱՆՆԱ ԱԳԱՄՅԱՆ - Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի շինարարական գործունեությունը.....	122
ՄԱՐԻՆԵ ԳԵՒՈՐԳՅԱՆ - Սամվել Շահմուրադյանը Արցախյան ազատամարտում	132

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Դեռնդ պատմագրի աշխատության նոր թարգմանությունը	140
---	-----

- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեսնց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիճագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Միսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԸ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԸ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, Երևան
- ՆԲՀ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- ԱԳՎ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- ANES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

*Հրատարակում է
Գեորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտությունների երաշխաւորութեամբ եւ որոշմամբ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային և Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատվական հանգույցի» ձևավորման աշխատանքներին:

Այս հանգույցում ի մի են բերվում հայագետների և գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների հրատարակած հոդվածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցությունն են բերում հայաստանյան և Սփյուռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչությունները, գրադարանները:

Հանգույցը հասանելի է <http://www.flib.sci.am/arm/node/2> համացանցային հասցեով: Օգտվողներին բոլոր նյութերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռման կարգավիճակով:

Ունեցե՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտվելով հանգույցից, տարածելով տեղեկատվություն դրա մասին, տրամադրելով թվայնացված նյութեր:

Հայաստանի ազգային գրադարան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ՎՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review "Etchmiadzin"

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am
Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com կամ etchmiadzinamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am

Հեռ. (+374-10) 517-296/174

Ստորագրուած է տպագրութեան՝ 23 05. 2016 թ.

Չափաը՝ 70X100 1/16: Ծաւալը՝ 10 տպ. մանուկ: Թուղթը՝ օֆսէթ: Տպաքանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ